

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ԲԷԹԼԷՆԷՄԻ ԱԶԳԱՅՆՈՑ ՎԵՐԱՑ.

1623 թուին, Պարոն Տէր Գրիգոր Երուսաղէմի Հայոց Պատրիարքի օրովը, Յոյն տիրապետութեան տենչանօք խնդիր կը յարուցանեն թէ, քանի որ Հայք Բեթլէնէմի մէջ ժողովուրդ չունին, պէտք է որ ձեռն-
 թափ լինին Եննդեան սուրբ Տեղիքներէն, եւ նոյն իսկ Բեթլէնէմի մեր վանուց մէջ Եկեղեցւոյ շինութեան արգելք ըլլալ կուզեն:

Իրաց այս պարագաները կատիպեն զՊարոն Տէր Պատրիարքն, որ Երուսաղէմի սուրբ Յակոբայ վանուց բրձազգեսաց միաբաններէն Մուշեցի Յակոբը ի Բեթլէնէմ տանելով կամուսնացունէ Լատին օրիորդի մի հետ, հոն նոցա բնակութեան տեղի հաստատելով, ա-
 նոնց ամեն պէտքերը կը հոգայ: Եւ անոնցմէ կը սե-
 րին Բեթլէնէմի Հայ ժողովուրդը, որոց թիւը այսօր 108ի կը հասնի:

Բաց ի այս ժողովուրդէն՝ 12 Հայ բնակիչ եւս ու-
 նիմք ի Բեթլէնէմ, որք ժամանակին Քէրակէն գաղ-
 թած են:

Սոյն ժողովրդեան սակաւաթիւ լինիլն, որ մեծ դը-
 ժուարութիւն յարուցած էր ամուսնանալ ուղղներու
 մէջ տեղը, վերջին ժամանակներս հանգուցեալ Յով-
 հանէս Սրբազան Պատրիարքն, եթէ ոչ աշխարհի ա-
 ռաջին մարդոյն իսպառ հետեւելու, զոնէ սակաւ ինչ
 մտտնելով, ճիւղահամարութիւնը երեքի իջեցոյց, ո-
 րով քիչ մը դիւրութիւն եղաւ մեր սակաւաթիւ Հայ
 ժողովրդեան (օտար ազգաց աղջկուք իրեն հարսնու-
 թեան չառնելով) իրենց մերձականները իրեն հարս-
 նութեան առնելով:

Թէ եւ Բեթլէնէմի մէջ անխտիր ամեն Քրիստո-
 նեայ ազգերն իրարու հետ խնամութիւն կընեն, բայց
 Լատինք եւ Յոյնք միշտ կըզգուշացունեն իրենց ժո-
 ղովուրդը, որ օտար ազգաց աղջիկ չիտան:

Նա եւ ըստ տեղւոյն սովորութեանց հարսնախօ-
 սութեան դրամական դաշինքը Պօլսոյ Թրագօմայի հա-
 կառակն է. փոխանակ աղջկան ծնողներէն պահան-
 ջելու, իրենք 20 ոսկիէն մինչեւ 100 ոսկի*) կը վճա-

րեն, աղջկան մերձակայ ազգականաց ամենուն ալ ըստ
 արժանւոյն մէկ մէկ ընծայ կը տրուի տղայի կողմէն,
 եւ ասոր քուն պատճառն ալ տղայոց շատ ծնանին,
 եւ աղջկանց սակաւ լինելն է:

Բեթլէնէմի ժողովրդոց միութիւնն ազգայինէն ա-
 ւելի թաղային է մինչեւ իսկ Եկեղեցական խառնու-
 թեանց մէջ, ինչպէս որ շատ անգամ պատահած է
 Հայոց թաղերու մէջ բնակող Յոյներն եւ Լատիններն
 Հայոց ժողովրդեան հետ միանալով, Յոյն եւ Լատին
 ժողովրդին դէմ զինած են:

Այս օրինակին կը հետեւին Բեթլէնէմի ամեն Քը-
 իստոնեայ ազգերն:

Բեթլէնէմի Քրիստոնեայ ննջեցելոց յուղարկաւո-
 րութեան ժամանակն Եկեղեցական հանդիսի հետ կը
 խառնուի՝ նա եւ կանանց հանդէսն, որք ննջեցելոյն
 ծիրքերը եղանակաւոր բարձր ծայնով մը երգելով դա-
 զաղի ետեւեն կերթան, եւ մեռնողի շատ մերձակայ
 կանայք իսպառ զխիբաց կերթան:

Մեռնողի ամենասիրելի զգեստներն հետն կը թա-
 ղեն, միայն թէ Բեթլէնէմն, Երուսաղէմի սահմաննե-
 րու ուրիշ քաղաքաց սովորութեան չի հետեւիր. նախ
 թաղուած ննջեցելոյն վրայ վրան յօրինելով՝ երեք օր
 կըսպասեն եւ իրենց ծանօթ աղջականք եւ բարե-
 կամներն երեկոյ եւ առաւօտ գնալով վրանի տակը
 սուրճ կը խմեն: Բեթլէնէմի կանայք ուժ օր շարու-
 նակ ննջեցելոյն զերեզմանի վրայ երթալով, երգեր
 յօրինելով ողբածայն կերպեն, զարձեալ մերձականներն
 զլուին բաց կերթան:

Այս արարողութիւնը քառասուն օրէն վերջն եւս
 կը կատարեն:

Նա եւ Բեթլէնէմցիները՝ ինչպէս որ Պաղեստինոյ
 շատ տեղերը ննջեցելոյն ամենէն ընտիրը եւ իրեն
 սիրելի ագուստները իրեն հետ կը թաղեն, այս առ-
 թիւ ուրիշ տեղերը վրան կը յօրինեն զերեզմանի վը-
 րայ եւ երեք օր կը սպասեն: Նա եւ տեղւոյն ժողո-
 վուրդն ամեն երեկոյ եւ առաւօտ զերեզմաննոցը դի-
 մելով վրանի տակը սուրճ կը խմեն: Այս սովորու-
 թիւններն առանց բացառութեան են: Որ եւ է բրիտ-
 տոնեայք եւ մահմետականք անխտիր ի զործ կը դը-
 նեն:

(*) Այս սովորութիւնը Հայաստանում շատ տեղեր կայ, եւ
 Պաշլը կիւլուի, ուստի կարելի է ասել թէ, Քրտերէն ամա-
 րուած է, վասն զի նոցա մէջ ընդհանուր սովորութիւն է:

Ե. ԽՄԲ. ԱՐ.